Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ն. Քուչակի

Կեղծ հանճար է
պոչը

891.715
Ք-62

-6 NOV 2011

Վ. Բիանկի

փոխ. Հ. Հայրապետյան



# ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ Է ՊՈՉԸ

նկ. Մորոզովի

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

-4 MAR 2013

ՊԵՏՀՐԱՏ N: 1510
ԳՐԱՌԵՊ. N: Ճ1741 (բ)
ՏԻՐԱԺ 4000
ՎԻՄ. ՊԵՏՀՐԱՏԻ ՊԱՏ N: 428



Հսկա ճանճը
անտառում
պտտվում էր,
տզզում.
— Լսեք, գազան,
թռչուններ,
դաշտի բոլոր
սողուններ,

ով որ իզուր
իր յերքից
պոչ է կախել
ման գալիս,
պետք է կորեմ
յես տակից,
հրաման են
տվել ինձ.



Լորտուն ասաց
են ճանճին.
— Յես ինչ ասեմ
քեզ պեսին,
բա հո պոչը
իզուր չի.
եդ ում ե, վոր
պետքը չի,
թե վոր յես պոչ
չունենամ,
հապա ինչպես
կսողամ.
պոչը վատ ե
ինձ համար,
այ չարամիտ
կռվարար։



Խեցգետինը
գետակից
ձայն ե տալիս —
— Լսիր ինձ.
բա վոր յես պոչ
չունենամ,
ասա, ինչպես
կլողամ.
պոչն ինձ համար՝
վոնց թիակ.
վորով վարում են
նավակ։



— այ աղ անեմ
քո խելքին.
խելոք ճանճ ես
ահագին։—





ասաց ձուկը
էն ճանճին,
վոր մոտիկ էր
իր գնչին,—
պոչն ինձ համար
ղեկ է, ղեկ,
առանց նրան,
այ անխելք,
յես վռնց լող տամ
էս ջրում.
ջուրն ինձ ծռում է,
ծռում։

Փայտփորիկը
հաստ ծառից
ասաց նրան.



— Սիրելիս,
յերբ վոր կեղեվ
եմ փորում,
պոչս ծառին
եմ հենում,
պոչն ինձ համար,
այ անբան,
հենարան է
հենարան։





Նախշուն կտցարը
օդում
թռչկոտում է
ու յերգում.
— Յերբ վոր փչում
է քամին,
օդի միջում
այդ ժամին
պոչիս բարակ
փետուրները
սկսում են
սուլել.
սազ է ածում
իմ պոչը,
գիտե՞ս արդյոք
այդ ճանճը։




— Հիմար ճանճիկ
առանց պոչ,
ինչ յես յեկել,
անում կոչ.
աղվեսն ասաց
էն ճանճին, —
յերբ վոր գյուղի
չար քուչին
ընկնում է իմ
յետևից,
պոչս ծռում եմ
դեպ աջ,
ինքս փախչում
դեպի ձախ,
մնում առողջ,
անվնաս։



Ճանճը հասավ
գետափին։
Քնած կովը
իր ագին
աջ, ձախ կողքին
էր խփում,
անուշ-անուշ
մրափում։
— Կովի՛կ, կովի՛կ
ահագի՛ն,
ի՞նչ ուժ ունի
քո ագին,—
ասաց ճանճը
կովիկին,
նստեց նրա
լայն մեջքին։





Քնած կովը
ահագին,
պոչով խփեց
իր մեջքին,
խփեց ուժգին
ու թափով,
ասես մի մեծ
մտրակով։
Ու մեր ճանճը
պարծենկոտ,
սատկեց, ընկավ
կովի մոտ։



Гос. Публ. Библиотека

Գինը 50 կոպ.

21-



В. БИАНКИ

ХВОСТЫ

ГИЗ ССРА 1931 ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան
NL0383429

2755